ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքը ապրիլի 7-ի առթիվ

Մեր համալսարանի սիրելի աշխատակցուհիներ, ուսանողուհիներ

Ուրախությամբ շնորհավորում եմ ձեզ մեր երկրում նշվող Մայրության և գեղեցկության տոնի՝ ապրիլի 7-ի առթիվ: Այսօր Հայ առաքելական եկեղեցին նշում է Սուրբ Աստվածածնի Ավետման տոնը, ուստի օրվա խորհուրդն ավելի խորաքային և արժեքավոր է դառնում:

Կանանց, մայրերի, քույրերի, դուստրերի դերը, ինչպես վկայում է պատմությունը, բացառիկ է մեր ժողովրդի կյանքում, բացառիկ է նաև մեր կյանքում: Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ, մաղթում առողջություն, երջանկություն, մայրական բերկրանք, անձնական ու ընտանեկան բարօրություն: Ցանկանում եմ, որ դուք, ինչպես ընդունված է ասել՝ մարդկության գեղեցիկ կեսը, պատվով շարունակեք ձեր առաքելությունը՝ մնալով ամուր հենարան ու ապավեն ձեր ընտանիքների, զավակների և մեր պետության համար:

Ամենայն բարիք ձեզ:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ